Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 թվականի հուլիսի 20-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/17

«Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար չափող սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/17 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2021 թվականի հուլիսի 20-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2021 թվականի հուլիսի 20-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N: 1. Խնդրում եմ պարզաբանել, արդյո՞ք հրավերի տեխնիկական բնութագրի 1.1, 1.4, 1.5, 1.6, 1.9 և 1.10 կետերում նշված՝ Vegason 62 մակնիշի կամ համարժեք ուլտրաձայնային մակարդակաչափը պետք է մատակարարի մասնակիցը, թե՞ այն տրամադրում է պատվիրատուն:
Պարզաբանում N: 1. Հրավերի տեխնիկական բնութագրի 1.1, 1.4, 1.5, 1.6, 1.9 և 1.10 կետերում նշված՝ Vegason 62 մակնիշի կամ համարժեք ուլտրաձայնային մակարդակաչափերը տրամադրում է պատվիրատուն:

Հարցադրում N: 2. Արդյո՞ք հոսքաչափերի տեղադրման վայրերը ընտրելիս հաշվի են առնված ուլտրաձայնային հոսքաչափերի տեղադրման առանձնահատկությունները՝ ուղղագիծ, ամբողջովին լցված և բոլոր կողմերից բաց հատված:

Պարզաբանում N: 2. Հոսքաչափերի տեղադրման վայրերը ընտրելիս հաշվի են առնվել ուլտրաձայնային հոսքաչափերի տեղադրման առանձնահատկությունները՝ ուղղագիծ, ամբողջովին լցված և բոլոր կողմերից բաց հատված:

Հարցադրում N: 3. Մետաղական հորերի տեղակայման հետ կապված կա՞ն արդյոք նախանշված տեղեր և լրացուցիչ շին. աշխատանքներ իրականացնելու կարիք:

Պարզաբանում N: 3. Մետաղական հորերը և դիտահորերը (Մանթաշի ջրամբար) պետք է տեղակայվեն նախանշված տեղերում և ունեն լրացուցիչ շինարարական աշխատանքներ իրականացնելու կարիք:

Հարցադրում N: 4. Հոսքաչափերի տեղադրման համար անհրաժեշտ էլեկտրամատակարարումը ապահովվա՞ծ է թե ոչ:

Պարզաբանում N: 4. Հոսքաչափերի տեղադրման համար անհրաժեշտ էլեկտրամատակարարումը ապահովված չէ միայն Գեղարդալճի ջրամբարի տարածքում, այստեղ սնուցումը նախատեսվում է իրականացնել արևային մարտկոցի կիրառմամբ:

Հարցադրում N: 5. Խնդրում եմ պարզաբանել և հստակեցնել՝ ինչ է ենթադրում տեխնիկական բնութագրում նշվածը՝ "Ծառայության մատուցումն իրականացվում է Պատվիրատուի պահանջով ըստ անհրաժեշտության":

Պարզաբանում N: 5. "Ծառայության մատուցումն իրականացվում է Պատվիրատուի պահանջով ըստ անհրաժեշտության" արտահայտությունը ենթադրում է, որ հրավերով նախատեսված ծառայությունները

անհրաժեշտ կլինի մատուցել ոչ թե բոլորը և միաժամանակ, այլ աստիճանաբար՝ հաշվի առնելով ինչպես ոռոգման սեզոնի տվյալ ժամանակահատվածում տվյալ օբյեկտում միջամտության տեխնիկական հնարավորությունը, խողովակների լցվածությունը կամ դատարկման նպատակահարմարությունը, այնպես էլ Ընկերության ֆինանսական հնարավորությունները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/17 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Կ. Բարսեղյանին:

Հեռախոս՝ 012 74 00 77:

Էլեկտրանային փոստ՝ «sevan_hr.gnum@mail.ru»::

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/17 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով